

**ՆԱՄԱԿ «ԼՐԱՐԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
ԱՄՍԱԳՐԻ ԽՄԱԳՐՈՒԹՅԱՆԸ**

Կարգավորված այս հեղինակավոր դիտական պարբերականի 1984 թ. № 6-ում հրապարակված՝ Նատալյա Կոզինցևայի «Անցողական և ահանցողական բայերից հարակատար դերբայով կազմելու» երկրորդական ժամանակաձևերի և հարակատարի հարաբերակցությունները հոգովածը (էջ 22—28)՝ մենք ունեցանք թե՛ ուրախություն և թե՛, միաժամանակ, զարմանքի, ափսոսանքի, նույնիսկ զայրույթի զգացումներ:

Ուրախ ենք, որ հայերենագետների շարքերը համալրվում է մեկ խոստովանելից գիտնականով ևս (Իհարկե, սա նրա միակ հայերենագիտական հոգովածը չէ). երիտասարդ գիտնականն զբաղվում է մի այնպիսի հարուստ, բայց և դժվարին խոսքի մասի ուսումնասիրությամբ, որպիսին բայն է: Այս բնագավառում, իհարկե, մինչև այժմ քիչ բան չի արվել մեզանում, բայց և դեռ շատ անելիք կա:

Հիշյալ հոգովածում հեղինակն անդրադարձել է հայերենի տարբեր սեռերի բայերի հարուստ դերբայի դրսևորումներին գլխավոր և երկրորդական բաղադրյալ (վերլուծական) դիմալոր ձևերում ու շոշափել վերջիններիս հարաբերակցության խնդիրը: Նշենք, որ նա այն հիմնական հարցում, որը վերաբերում է հարակատար դերբայով կազմվող դիմալոր ձևերում բայերի սեռային գործառույթներին, կանգնած է ճիշտ դերքերի վրա: Բայց... ճիշտ դերքերից ելնելով և հետազոտական պրպտումներով որոշ ուշագրավ դիտողություններ անելով հանգերձ՝ նա հենց այս հարցում, ինչպես ասում են, մեծ մասամբ բաց դռներ է ծեծել:

Հայերենի հարակատար դերբայով կազմվող ժամանակաձևերի կազմության մեջ տարբեր սեռերի բայերի գործառական յուրահատկությունների և այդ սահմաններում դիմալոր ձևերի քննության հարցը մեզ հետաքրքրել է շատ վաղուց, և շուրջ շուր տասնամյակ առաջ մենք այն դարձրինք հատուկ քննության առարկա: Հետազոտության արդյունքներն ամփոփվեցին մեր «Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» աշխատության մեջ, որը ապագրվեց 1953 թվականին: Այնտեղ մենք փորձել ենք այդ իրողությունների շրջանակներում քննել ընդհանուր հայերենի այն բոլոր տարբերակները (միջին հայերենը, արևմտահայերենը, արևելահայերենը և բարբառները), որտեղ բայական համակարգում գործառում է հարակատար դերբայը, կատարել ենք խմբավորումներ, ցույց տվել այդ ժամանակաձևերի յուրահատկություններն ըստ հայերենի առանձին տարբերակների:

Արեւելահայ գրական լիզվի համար մեր հիմնական եզրակացությունը եղել է (և է) այն, որ զարգացման ներկա շրջանում մեր գրական լեզուն հարակատար դերբայով կազմվող գրվածքային բաղադրյալ դիմալոր ձևերում ունի որոշակի սահմանափակումներ. այստեղ ներգործական սեռի բայերը հանգստ լին գալիս (չի կարելի ասել կամ գրել ես գրած եմ նամակ), իսկ կրավորական սեռի բայերը գործառում են առանց սահմանափակման (այս գիրքը գրված է ֆառասուն տարի առաջ), շեղք սեռի բայերից հիշյալ դիմալոր ձևերի կազմությանը մասնակցում են որոշ թվով բայեր, որոնք դրույթյան, վիճակի գաղափար են արտահայտում (ինչպես՝ կանգնել—կանգնած եմ, պառկել—ապառկած եմ և այլն): Երկրորդական բաղադրյալ ձևերում այս սահմանափակումները վերանում են. անխոր գործառում են և՛ ներգործականները (որոշակի ժամին նա իր դասերը միշտ պատրաստած է լինում), և՛ կրավորականները, և՛ շեղքները: Այստեղից էլ բխում են այս երկու կարգի ժամանակաձևերի յուրահատկությունները:

Մեր ուսումնասիրության արդյունքներն ու եզրակացությունները զետեղված են վերահիշյալ մենագրության «Հարակատար դերբայի ձևաբանական արժեքը» գլխում (էջ 366—397): Իհարկե, հետագայում մի շարք մասնագետներ տարբեր դերքերից ու տարբեր մոտեցումներով անդրադարձել են նման հարցերի, սակայն տվյալ դեպքում դա լինելու դարձնում խնդրո առարկա:

Ն. Կողինցեան իր հոգվածի սկզբնամասում տողատակի ծանոթութլամբ հիշատակում է մի քանի աշխատութլուններ (էջ 22, ծան. 1), որոնց հեղինակները, իր իսկ խոսքով տսված, շարակատարի ու հարակատար անցլալի կառուցվածքալին և իմաստալին առանձնահատկութլուններ տարբեր հալեցակետերից ուսումնասլրել են...: Բալց տեղլակ ընթերցողը չի կարող շնկատել, որ հիշատակված աշխատութլունների հեղինակները բոլորովին ալլ կարծիքի են. չեն ընդունում ժամանակակից հալերենի համար հարակատարով դիմավոր ձեեր (նշվածներից տեեր է բացառել ակադ. Ջահուկյանին):

Սա ի՞նչ հանելուկ է, իր տեսակետին հակառակ տեսակետ արտահայտած հեղինակների աշխատանքները հոգվածագիրը հիշատակել է, իսկ ալն աշխատութլունը, որի հիմնական դրութներին դրեթի նույնական են իր մտքերը՝ հատկապես նշված դիմավոր ձեերում բալերի սեռալին դրսևորումների հարցում, թեկուզ և տողատակի ծանոթութլամբ հիշատակման չի արժանացրել:

Ի՞նչ համարենք ալս իրողութլունը. ուրիշի աշխատանքի միտումնավոր անտեսում՝ յուրացածն նպատակով, անմիղ անտեղլակութլուն, թե՞ գուցե և մեկ ալլ տհաճ բան:

ԱՇՈՏ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ

Խմբագրութլան կողմից. ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ա. Ա. Աբրահամյանի դիտողութլունը համարելով միանգամալն տեղին, խմբագրութլունը ևս դժվարանում է որոշել, թե ինչ շարժառթթներով է ղեկավարվել հոգվածագիր Ն. Կողինցեան, երբ շրշանցել է նրա աշխատութլունը, որի հիմնական դրութները գրեթե կրկնել է: Պարսլ է, սակալն, մի բան՝ առնվաղն առկա է գիտական անբարեխղճութլունը:

Հուսով ենք, որ սուլն ճնամակրած կղգաստացնի բոլոր ալն հոգվածագիրներին, ովքեր կըփորձեն անտեսել գիտական էթիկալի նորմերը: Միաժամանակ, ամսագրի խմբագրութլունը միանգամալն տեղին է համարում ՀՍՍՀ ԳԱ հասարակագիտական ինստիտուտների ղեկավարներին և մասնագետ գրախոսների ուղղորդութլունը հրավիրել ալն բանի վրա, որպեսզի հոգվածները գրախոսելիս ցուցաբերվի առավելագուլն խստապահանջ վերաբերմունք: